ԵՊՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84»

ք. Երևան 07 նոյեմբերի 2017թ.

«ԵՊՀ» Հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Սիմոնյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Եսայանի, որը գործում է կազմակերպությա կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2) :

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետի համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքի պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4569180 /չորս միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար հարյուր ութսուն/ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամակա միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցու կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցի (հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետ և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարու իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը գործ ստանդարտների պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնոր կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված N 1-ի:

4.3 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս ոչ Գնորդի մեղքով առաջացած թերություններ ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացն թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունմա արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջ երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդի է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելվա N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկ տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չ կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են ի տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժն «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդ պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողի է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմ հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագր պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետու նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնու հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասակա եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրո նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսվա պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանք կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումներ համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա գրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքու Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետությա դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետ լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանք օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետ կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանվա ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտներ (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագր կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս է պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Ա գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերություններ

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ԵՊՀ» Հիմնադրամ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
Ք.Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, 0025, Խանջյան փ., շ.50
ՀՎՀՀ՝ 01506928	ՀՎՀՀ՝ 01204713
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906	Հ/Հ 1570005003790100
Ռեկտոր՝ Ա.Սիմոնյան	Գլխավոր տնօրեն՝ Ռ.Եսայան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
07 նոյեմբերի 2017թ. կնքված
№«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84» պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափ. միավորը	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
19	32351120	Ինտերակտիվ դիսպլեյ NEC	**NEC Display Solutions** /Ճապոնիա/ *Չինաստան*	Լայնֆորմատ ինտերակտիվ դիսպլեյ/Large Format **Touch** LCD Display **NEC MultiSync V554-T** ՝ լրակազմով. **Ա)** Լայնֆորմատ **ինտերակտիվ** դիսպլեյ/Large Format **Touch** LCD Display **NEC MultiSync V554-T՝** **Հատուկ հնարավորություններ / Special Characteristics:** - **Inspiring touch performance boosts user experience** – the fast, stable and robust touch performance supports up to **10 touch points**; - **Resilient and durable design** – the **4mm** thermal tempered protective glass with single sided anti-glare coating withstands vandalism and ensures perfect readability with reduced reflection and minimal visibility of finger prints; - Simple **Plug & Play** – **easy set-up without the need to**	հատ	2072340	2072340	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1	IV եռամսյակ

				install any drivers on the host PC for all major operating systems. - Programmable integrated **Ambient Light Sensor** - *for reduced power consumption and eye pleasing brightness levels*; - **Հատուկ ծրագրային ապահովում NaViSet Administrator 2** բազմաբանակ պրոյեկտորների ղեկավարման համար համակարգչային ցանցի միջոցով / **NaViSet Administrator 2** Multi-Display Management Software – to manage all the connected displays from a centralized location; - Optional **Human Sensor**. *Save on power and reduce operating cost when the display operates at a very low brightness level and only switches to a higher brightness when a person is nearby*. This optional feature can also be used **for creative signage** to e.g. switch inputs automatically to change from entertainment to information when a person approaches the screen. **External**, **4-5** m range, *triggered actions programmable*; - **Temperature Sensor** - Integrated, 3 sensors, *triggered actions programmable*; - **NFC Sensor** - Integrated, 2cm range, free NEC Android App required; - **DICOM** support; - OSD rotation for portrait mode; - Various **PiP** (Picture in Picture) **options**; - **AMX NetLinx** & **Crestron RoomView** Support; - Auto ID assignment; - OmniColor Control, Image flip & Point Zoom Function; - Intelligent Wireless Data (based on NFC); - Programmable 12-bit LUT with 3 memory banks; - Automatic **Alarm E-Mails**; - MediaPlayer with Browser Control; - **Slim LED Indicator;**;							

				- Full System Scheduler; - Hardware colour calibration possible; - Glass - **Thermal-tempered, anti-glare coating, 4 mm** thickness; - Panel - **S-IPS** with **Edge LED** backlights; - Անկյունագիծը / Diagonal **55"** (138,8 cm); - Էկրանի ակտիվ մակերես՝ / Active Display Area - **1,209.6 x 680.4 mm;** - Հպազգայման տեխնոլոգիա – ինֆրակարմիր / Touch Technology - **Infrared Touch;** - Առավելագույն 10 միարժամանակյա հպում / Max. number of simultaneous touches – **10**; - Հպման եղանակը՝ **մատով** կամ **ցանկացած գրչաձև առարկայով**; Touch Method - **finger, gloves, stylus** or any other pointer ≥6 mm; -Հպազգայման կետայնությունը՝/ Touch Resolution - 32767 x 32767; - Դիտման ռեժիմները՝ դիմանկար, լանդշաֆտ; / **Face Up; Landscape; Portrait** viewing modes; - **Կետայնությունը՝** / Resolution (native)- **Full HD (1,920 x 1,080** pixels); - Կողմերի հարաբերակցությունը / Format - 16:9; - **Պայծառությունը՝** / Brightness – **440 cd/m2;** - **Կոնտրաստը՝** / Contrast – **1,200:1**; - Արձագանքման ժամանակը / Response time – **8 ms**; - Տեսանելիության անկյունը՝ / Viewing Angle (V/H)- **178°;** - **Ներկառուցված բարձրախոս / Built-in 2** x **10** Watt speakers; - **Մուտքային տերմինալներ՝** / <u>Inputs:</u> 1 x **DVI-D** (with HDCP); 2 x **DisplayPort** (with HDCP); 2 x **HDMI** (with HDCP); 1 x **VGA**; 2 x **3,5** mm jack **Audio;** - **Մուտքային հաղորդակցման տերմինալ՝** / <u>Input Control</u>: 1 x **LAN 100Mbit**; 1 x **Remote Control** (3.5 mm jack); 1 x **RS232**;						

				- Input Data: 1 x **microSD** (MediaPlayer); 1 x **USB 2.0** (MediaPlayer); 1 x **USB 2.0** (Service); 1 x **USB Type-B** (Upstream); 2 x **USB 2.0** (Compute Module, 1 x 5V/2A powered) - **Ելքային տերմինալներ՝** / Outputs: 1 x **DisplayPort** (loop through: DisplayPort, OPS slot-in PC); 1 x **3,5** mm jack **Audio;** - **Հաղորդակցման տերմինալ՝** / Control interfaces : 1 x **LAN** 100Mbit; - **Քաշը՝** / Weight - **39** kg. - Երաշխիք / Warranty - 30 months *Manufactured by* **NEC Display Solutions** (Japan).							
		Vogels	*Vogels Products B.V.* (Նիդերլանդ-ներ) *Նիդերլանդ-ներ*	Բ) **Պատի կախոց՝ Vogel's Monitor Wall Mount VFW140** for NEC MultiSync V554-T display. Երաշխիք / Warranty - 30 months							
		Equip	*DDC GmbH* (Գերմանիա) *Չինաստան*	Գ) **Մալուխ՝ Equip HDMI** cable with Ethernet 5m M/M Երաշխիք / Warranty - 30 months							
		Equip	*DDC GmbH* (Գերմանիա) *Չինաստան*	Դ) **Մալուխ՝ Equip USB 2.0** active extension cable 5 m Երաշխիք / Warranty - 30 months							
28	38651200	Թվային պրոյեկտոր, **NEC**	**NEC Display Solutions** /Ճապոնիա/ *Չինաստան*	**Full 3D** թվային պրոյեկտոր / **Full 3D** Digital Projector **NEC M403H - 2** հատ - **Full 3D DLP®-link™** technology; - **Պայծառությունը՝** / Brightness – **4,000** ANSI Lumens; - **Կետայնությունը՝ իսկական** (ֆիզիկական)՝ Native **Full HD** (1,920 x 1,080 pixels) / **արհեստական** (ինտերպոլացված)՝ compressed **WUXGA** (1,920 x 1,200 pixels) resolution; - **Լամպի շահագործման ժամկետը՝ 3,500/8,000** ժամ (Պայծառ/Ստանդարտ ռեժիմներում)/**Lamp life – 3,500/8,000** hours (High Bright/Normal mode); - **Կոնտրաստը՝** / Contrast - **10,000:1**;	հատ	876870	1753740	2	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	2	IV եռամսյակ

				- **Պատկերի չափը՝** / Image size - **30" - 300";** **Պատի գույնի կոմպենսացում** / Wall Screen Correction; - **ՈՒղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում** / Manual Keystone Correction- **H** +/- 25° manual / **V** +/- 30° - Հատուկ ծրագրային ապահովում բազմաքանակ պրոյեկտորների ղեկավարման համար համակարգչային ցանցի միջոցով; - **Հեռակառավարում և հսկում՝ LAN-ի և RS-232-ի** միջոցով / Remote control and administration via LAN and RS232; - **Ներկառուցված բարձրախոս 20 W** / Built-in **20 W** speaker; - **Մուտքային տերմինալներ՝** / Input terminals - 1 x Mini D-sub 15-pin, compatible to component (YPbPr), 2 x HDMI™ (Deep Color, Lip sync), 1 x RCA, 1 x 3.5 mm Stereo Mini Jack; 1 x RCA Stereo, 1 x 3.5 mm for Microphone - Monaural Mini Jack (Dynamic mic / Condenser mic); - **Ելքային տերմինալներ՝** / Output terminals - 1 x Mini D-sub 15 pin; 1 x 3.5 mm Stereo Mini Jack (variable); 1 x 3D Sync- Mini DIN 3pin; - **Հաղորդակցման տերմինալներ՝** / Communication terminals - 1 x D-Sub 9 pin (RS-232) (male); 1 x RJ45; Optional WLAN; 1 x USB Type A (USB 2.0 high speed) & 1 x USB Type B; - **Multilanguage** (incl. English and Russian) **Menu/Manuals** ; - **Քաշը՝** / Weight – ոչ ավել քան **3.6** kg ; - Երաշխիք / **Warranty:** - Թվային պրոյեկտորի համար՝ **30** (երեսուն) **ամիս.** - **Հատուկ կրթական երաշխիք** *ներկառուցված* **լամպի** համար՝ **3** տարի կամ **3,000** ժամ: *Manufactured by* **NEC Display Solutions** (Japan).							
32	30237240	Պրոֆեսի ոնալ PTZ	**Aver information**	**Պրոֆեսիոնալ PTZ տեսախցիկ միասնական կապի համար / Unified Communication Professional PTZ**	հատ	743100	743100	1	ք. Երևան, Ալեք	1	IV եռամս

		տեսախցիկ միասնական կապի համար, **Aver**	Inc. /Թայվան/ *Թայվան*	**Camera with Speakerphone and Hub AVer VC520** - Կետայնությունը / resolution - **Full HD (1,920 x 1,080 pixels)**, - Ավտոմատ ֆոկուսացումով PTZ տեսախցիկ սեղանի / պատի կախիչը ներառված (12-x օպտիկական խոշորացում, ±130° հորիզոնական առանցքով տեղաշարժ, +90°/-25° ուղղահայաց առանցքով տեղաշարժ, 82° տեսադաշտ (անկյունագծով) **/Auto Focus PTZ** Camera (12-x **Optical** Zoom,±130° Pan, +90°/-25° Tilt, 82° FOV (diagonal)) with table/wall/ ceiling mount; - **Plug & Play** Design (USB 2.0); - Տեսախցիկի **10** նախակարգավորումներ / **10** Camera Presets; - Ստանդարտ եռոտանու վրա ամրացնելու հնարավորությամբ / Standard tripod thread; - Հորիզոնական / ուղղահայաց շուռ տալու հնարավորություն, առաստաղային կախիչով հետադարձ կախելու հնարավորություն / Flip horizontal/vertical, capable for reverse ceiling mount; - Սպիկերֆոն արձագանքի (echo) վերացման հնարավորությամբ / Cutting edge Speakerphone with Echo Cancellation, - Աղմուկի ճնշում և հաջորդաբար միացման հնարավորություն (լիարժեք դուպլեքս միկրոֆոնային համակարգ մինչև 2 հաջորդաբար միացված բարձրախոս, հպազգայունք կառավարում՝ ձայնի բարձրացում, իջեցում և անձայն, հեռախոսի մուտքի ընտրություն), ներառում է **10W** բարձրախոս, 3 ուղղվածության **360°** միկրոֆոններ **9** մ աշխատանքային տրամագծով և **3.5մմ** գծային մուտք (aux) մալուխ մասնակիցների սեփական սարքերը կամ համակարգիչները որպես բարձրախոս միացնելու համար) / Noise Suppression and **Daisy Chain** function (**Full Duplex** microphone array up to					Մանուկյան 1		յակ

				2 daisy-chain speakerphone, **Touch** controls for volume down, up, mute & phone input, includes **10W** speaker, 3 directional microphones supporting **360°** pick up in **9** m diameter range and **3.5**mm Line-in (aux) cable to connects to **BYOD** smartphones or PC as speakerphone); - **RS232 ինտեգրում / RS232** integration; - Ներբեռնվող ծրագիր ախտորոշման համար, ներկառուցված ծրագրային ապահովման թարմացում տեղում / **Downloadable** diagnostic tool, field firmware upgrade tool; - Ծրագրային ապահովվում կարգաբերումների և այլ հնարավորությունների համար / App for advanced features and settings; - **Անվճար ծրագրային ապահովում** Windows® և Mac® համակարգիչների համար (Skype™ ծրագրի հետ համատեղելի փոքր ծրագրի (Plugin) հեռակառավարման վահանակով զանգերին պատասխանելու / մերժելու, VC520 – ի ծրագրի ավտոմատ /ձեռքի թարմացման հնարավորություն, տեսախցիկի կառավարում և պարամետրերի տեղադրում, օպերացիոն կարգավիճակի ախտորոշում, հոսքային վիդեոի դիտում) / **Free download** on Windows® and Mac® computers **PTZApp** (Compatible with Skype™ Plugin for answering/hanging up via remote control, Upgrade of VC520 firmware automatically/manually, Control the camera and set it's parameters, Diagnose operating status, View live video); - **Մոնտաժվող կոնցենտրատոր սարքի բոլոր մասերի միացման համար** (ներառում է 2 x 5մ մալուխներ Hub-ի և տեսախցիկ/բարձրախոս միացման համար, 1 x 5մ USB մալուխ PC/Mac միացման համար, 1 x 0.9մ 3.5մմ aux մալուխ, փոփոխական հոսանքի սնուցման բլոկ) / **Mountable Hub** for connection of all components (incl. 2 x 5m cables for connection between Hub							

				and camera/speakerphone, 1 x 5m USB cable for connection to PC/Mac, 1 x 0.9m 3.5mm aux cable, AC Power adapter). - Ծրագրերի հետ համատեղելիությունը / Compatible applications: **Skype™, Microsoft® Lync, Google Hangouts™, FaceTime®, Cisco Webex®, GoToMeeting®, Adobe®Connect™, BlueJeans, Zoom, Vidyo®, Fuze, WebRTC.** - Երաշխիք / **Warranty** Ստանդարտ **3 տարի** տեսախցիկի, բարձրախոսի և HUB –ի համար / Standard **3 Year Warranty** for Camera, Speakerphone and HUB: **1 տարի** աքսեսուարների / 1 year - for accessories: *Manufactured by* **AVer Information Inc.** (Taiwan).							

Բոլոր սարքավորումները **նոր են, չօգտագործված** և **գործարանային փաթեթավորմամբ**:
Ապրանքի տեղադրումը, միացումը, փորձարկումն և Պատվիրատուի **անձնակազմի ուսուցումը մատակարարի, որպես NEC Display Solutions** (Ճապոնիա) և **AVer Information Inc.** (Թայվան) ընկերությունների ***Հայաստանում*** **միակ պաշտոնական գործընկեր կազմակերպության կողմից** իրականացվում է **պայմանագրի գնի շրջանակներում**:

ԳՆՈՐԴ

«ԵՊՀ» Հիմնադրամ
Ք.Երևան, Ալեք Մանուկյան 1
ՀՎՀՀ՝ 01506928
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906
Դեկտոր՝ Ա.Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ք. Երևան, 0025, Խանջյան փ., շ.50
ՀՎՀՀ՝ 01204713
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005003790100
Գլխավոր տնօրեն՝ Ռ.Եսայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«07» նոյեմբերի 2016թ. կնքված
№«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84» պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

22 Դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
19	32351120	Ինտերակտիվ դիսպլեյ NEC	-	2072340	2072340
28	38651200	Թվային պրոյեկտոր NEC	1753740	-	1753740
32	30237240	Պրոֆեսիոնալ PTZ տեսախցիկ միասնական կապի համար Aver	743100	-	743100

ԳՆՈՐԴ

«ԵՊՀ» Հիմնադրամ
Ք.Երևան, Ալեք Մանուկյան 1
ՀՎՀՀ՝ 01506928
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906
Տնօրեն՝ Ա.Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ք. Երևան, 0025, Խանջյան փ., շ.50
ՀՎՀՀ՝ 01204713
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005003790100
Գլխավոր տնօրեն՝ Ռ.Եսայան

(ստորագրություն)
Կ.Տ.